«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում

Հաստատությունը՝ ՀՀ Կոտայքի մարզ, «Հրազդանի թիվ 12 ՆՈՒՀ» ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Նարինե Գրիգորյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն ……..3

2. Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցությունը …….4

3.Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում……8

4. Աշխատանք ծնողների հետ ……11

5. Եզրակացություն ……..20

6. Գրականության ցանկ …….21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երեխան ունի տեսնելու, մտածելու և զգալու իր առանձնահատուկ ունակությունները: Չկա ավելի հիմար բան, քան փորձել փոխարինել դրանք մեր ունակություններով:

Ժան Ժակ Ռուսո

Դաստիարակությունը ինչպես հայտնի է նպատակաուղղված ներգործություն է երեխաների զարգացման, նրանց գիտակցության և վարքի, աշխարհայացքի, արարքների և սովորությունների վրա: Դաստիարակության հիմնական անձի ձևավորմանը նպաստելն է սկսած ծնված օրից: Ուստի ընտանիքը եղել և մնում է անձի դաստիարակության հիմնական օղակն ու վճռական գործոնը:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ծնողների հետ համագործակցությունը վաղ մանկական և նախադպրոցական տարիքի երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում: Ծնողները մշտապես կարիք ունեն իմանալու մանկապարտեզի տեսակետն իրենց երեխայի մասին: Միևնույն ժամանակ մանկապարտեզն իրապես շահում է ծնողների՝ տվյալ բնագավառին իրազեկվածությունից և երեխայի դաստիարակության գործին նրանց ներդրումներից: Դրանց շնորհիվ մանկավարժները հնարավորություն են ունենում հասնել երեխայի վարքի դրդապատճառների առավել համակողմանի պատկերացման: Համագործակցության արդյունքում թե՛ ծնողը, թե՛ դաստիարակը արժեքավոր տեղեկություններ են ստանում կարողությունների, հետաքրքրությունների, համակրանքների ու հակակրանքների մասին: Այս տեղեկատվությունը պետք է նույնպես այնպես փոխանակել, որ այն լավագույնս ծառայի երեխայի շահերին:

Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության մոդելի կենտրոնում երեխան է: Անտարակույս, նա է իր կրթության և զարգացման հաջողության գործի գլխավոր դերակատարը մանկապարտեզում և ընտանիքում: Սակայն համագործակցությունն ինքնին չի կարող հաջողակ երեխաներ ունենալու նախապայման դառնալ: Անհրաժեշտ է մշակել այնպիսի ձևեր, որոնք կնպաստեն ներգրավել, ուղղորդել, խթանել և շահագրգռել երեխաներին՝ ինքնուրույն հասնելու հաջողության: Երեխայի լիարժեք զարգացումը դժվար է պատկերացնել առանց ծնողների մասնակցության: Դա ամենօրյա ջանք պահանջող աշխատանք է , որը պետք է կատարվի սիրով և հաճույքով, քանզի այն արվում է երեխայի համար, նրա առողջությանը և համակողմանի զարգացմանը նպաստելու համար:

Ծնողների հետ համագործակցության ժամանակ պետք է հնարավորինս մեծ ուշադրություն դարձնել երեխայի հետ շփմանը, խոսել նրա հետ՝ օգտագործելով տարբեր առիթներ.

- կատարել ֆիզիկական վարժություններ,
- օդափոխել երեխայի սենյակը,
- ավելացնել զբոսանքների և մաքուր օդում քնելու ժամանակահատվածը,

- ապահովել բնակարանի անվտանգությունը, երեխան սիրում է մատիկները մտցնել անհարմար և վտանգավոր տեղեր, վարդակի անցքերը և այլն,
- համատեղ խաղերը պետք է դառնան ավելի բովանդակալից՝ «Ծափիկ-ծափիկ», «Ծիվ-ծիվ» բազմազան խաղեր՝ մատիկների մերսումով և ծալումով («Այս մատիկը») և այլն.
- խոսել երեխայի հետ, անվանել շրջապատում գտնվող առարկաները, իր մարմնի մասերը և այլն,
- ժամանակն է ձեռք բերել հարմարավետ կոշիկներ՝ բնական նյութից պատրաստված, ամբողջական ամուր ներբաններով, փոքրիկ կրունկով և ներդիրով (սուպինատոր), ինչը կանխարգելում է հարթաթաթությունը,
- խթանել և աշխուժացնել երեխայի արթունության ժամանակը, առավոտյան և ցերեկը՝ կատարել մերսում, ֆիզիկական վարժանքներ (այդ ամենն արագացնում է նյութափոխանակությանը և բարենպաստ ազդում երեխայի ինքնազգացողության վրա),
- ուշադրություն դարձնել երեխայի օրվա ռեժիմին, զբոսանքներին:

Ծնողների խնդիրն է՝

- ծանոթացնել առաջին գրքերին,
- հաճախակի կազմակերպել համատեղ խաղեր («Պահմտոցի»)՝ երեխայի կամ մեծահասակների դեմքը ծածկելով թաշկինակով, անձեռոցիկով, գլխաշորով,
- առավել ակտիվացնել համատեղ խաղերը,
- հնարավորինս շատ խոսել երեխայի հետ,
- ազատ խաղալու հնարավորություն տալ նրան
- հետևել, որպեսզի ստանա իր տարիքին համապատասխան բավարար տեղեկատվություն:

Նայելով երեխաներին, անգամ առանց որևէ բան հարցնելու, կարելի է հասկանալ, թե նա ինչպես է օրն անցկացրել մանկապարտեզում, կամ դիտելով խաղերը, իմանալ թե ինչպիսին է եղել իրավիճակն ընտանիքում:

Ծնողների համար ստեղծված մանկավարժական վահանակը պետք է ապահովի տեղեկատվություն՝ երեխաների զարգացման ընթացքի, ծրագրային

խնդիրների, ծնողների իրավունքների, պարտականությունների և այլ խնդիրների մասին:

Հնարավորության դեպքում պետք է ունենալ հատուկ սենյակ կամ «անկյուն»՝ ծնողների հետ կազմակերպելու կողմնորոշման հանդիպումներ, երեխաների՝ մանկապարտեզին հարմարման, խնամքի և դաստիարակության, խմբից խումբ սահուն անցնելու, երեխայակենտրոն ուսուցման և այլ խնդիրների վերաբերյալ: Հարկավոր է տանը հատուկ պայմաններ ստեղծել երեխաների խաղերի (անհրաժեշտության դեպքում համագործակցելու)համար:

Խորհուրդ ծնողներին.

- երեխայի հետ խաղալիս ձևացրե՛ք, որ շատ հաճույքով եք ուզում խաղալ,
- երեխայի համար գնե՛ք խաղալիքներ,
- երեխային նվիրե՛ք խաղեր և խաղալիքներ
- հաճախակի վերցրե՛ք երեխային ձեռքի վրա,
- մի՛ խուսափեք երեխային պառկեցնել ձեզ հետ՝ անկողնում,
- երբեք մի՛ խոսեք երեխայի հետ նրա լեզվով,
- անգամ նորածինն է զգում ծնողների վեճը՝ չհասկանալով բառերի իմաստը,
- տանը ստեղծեք հաճելի մթնոլորտ,
- վեճերը երեխայի մեջ առաջացնում են շփման ունակություն,
- նյարդայնությամբ մի՛ վարակեք երեխաներին,
- վաղ տարիքում երեխաները արագ են զարգանում, ուստի հաճախակի փոխե՛ք խաղալիքները,
- հնարավորություն տվե՛ք գործելու նաև առարկաներով, որոնք 12 ամսականում նպաստում են լսողության և տեսողության զարգացմանը, 2-3 ամսականում՝ խոշոր սյուժետային խաղալիքներ և հնչեղ խաղալիքներ, 5-6 տարեկանում՝ պլաստմասե, ռետինե, փայտե գնդակներ և գնդիկներ, 7-8 ամսականում՝ տարբեր գույների ու չափերի թեմատիկ խաղալիքներ, 8-9 ամսականում՝ փափուկ խաղալիքներ, բացվող և փակվող խաղալիքներ, 10-12 ամսականում՝ գլորվող գնդակ, բացվող-փակվող տուփեր, տակառիկներ, 1 տարեկանում՝ մուրճ, խաղալիք, բահ, լարովի խաղալիքներ

- տատիկի և պապիկի ներկայությունը բարենպաստ միջավայր է երեխաների զարգացման համար,
- երբեք մի՛ ծաղրեք երեխային,
- լավ է երեխային գովել, քան նախատել,
- երեխայի հետաքրքրությունների զարգացման լավագույն միջոցը կրկնությունն է,
- ոտանավորի ուսուցումը զարգացնում է հիշողությունը,
- նկարելու ստանդարտ թուղթը թևավորում է ստանդարտ մտածողությունը,
- երեխաներին պետք է շրջապատել այնպիսի խաղալիքներով, որոնց շոշափումը հաճույք է պատճառում,
- մարզեք երեխայի ձախ ձեռքը աջի նման:

Կյանքի երկրորդ տարում առաջարկվում են բոլոր տեսակի խաղալիքները: Երեխաները սիրով խաղում են կենդանիների, ձկների հավաքածուներով, սայլակներով, սահնակներով, ավտոմեքենաներով, լոտոներով, կառուցողական անվտանգ նյութերով և դրանց լրացնող սյուժետային խաղալիքներով: Դաստիարակը պարտավոր է ոչ միայն ծնողների ուշադրությունը հրավիրել երեխաների ինքնուրույն խաղերի զարգացման համար ստեղծված պայմանների վրա, այլև աջակցել՝ ելնելով երեխայի զարգացման աստիճանից, նա պետք է որոշի, թե ի՞նչ և ինչպե՞ս սովորեցնել երեխային, ի՞նչ խաղալիքներ տրամադրել և ինչո՞ւ, ո՞ւր գնալ երեխայի հետ և ի՞նչ դիտել, ի՞նչ ցուցադրել, ինչպե՞ս խաղալ նրա հետ և այլն: Առանց մեծերի ուսուցողական ներգործության ո՛չ մանկապարտեզում, ո՛չ ընտանիքում հնարավոր չէ ապահովել երեխաների մտավոր լիարժեք զարգացումը;

Ծնողների հետ համագործակցելիս պետք է նկատի ունենալ, որ այսօր երեխան այլ է, քան երեկ: Նա ֆիզիկապես և մտավորապես շատ արագ է զարգանում յուրաքանչյուր փուլում: Այդ պատճառով կարևոր է, որ ծնողները առավել ուշադիր հետևեն, թե ի՞նչ և ե՞րբ է հարմար երեխայի համար, ի՞նչ է հետաքրքիր: Միշտ պետք է որսալ առանց զարգացման բարենպաստ ազդեցության ճիշտ ժամանակը: Հավանաբար բոլոր երկրներում մեծերը երեխաների հետ հաճախ խոսում են «մանկական» լեզվով՝ մտածելով, որ երեխան « մեծերի» լեզուն չի հասկանա: Նման մոտեցման դեպքում երբեք չեն զարգանա երեխայի լեզվական ունակությունները : Երկու տարեկան երեխան հանգիստ հասկանում է անգամ

հեռուստահաղորդումների լեզուն: Անշուշտ, նոր խոսող երեխան, ինչ-որ անհասկանալի բաներ է ասում, սակայն ոչ այն պատճառով, որ նա չի հասկանում, այլ այն, որ դեռևս զարգացած չէ խոսակցական հնչարտաբերման համակարգը և այն «չի հասնում» նրա խոսելու ցանկության հետևից:

Ծնողները և ընտանիքի բոլոր անդամները պետք է գիտակցեն, որ ամենևին կարևոր չէ ինչ-որ արտակարգ բան անել երեխայի վաղ զարգացմանը նպաստելու համար: Այդ հարցում առավել էական են ընտանեկան համերաշխ հաճելի մթնոլորտը և ընտանիքում ստեղված ջերմ ու ներդաշնակ հարաբերությունները: Ընտանեկան միջավայրով, երեխաների նկատմամբ դրսևորած վերաբերմունքով պայմանավորվում է նաև այն հանգամանքը, թե ինչպիսին կմեծանա ընտանիքի ավագ, միջնեկ, կրտսեր կամ միակ երեխան:

Մինչ հիմա գործող ծրագրերում և մեթոդական ցուցումներում հատուկ ուշադրության չեն արժանացվել երեխայի նկատմամբ կիրառվող մոտեցումները՝ ըստ նրա որերորդ երեխան է, և ինչ զգացողություններ ունի որպես այդպիսին:

Ընտանիք - մանկապարտեզ-դպրոց

Ծրագիրը կարևորում է ընտանիքի, մանկապարտեզի և դպրոցի կապը: Այստեղ ընդգծվում է սոցիալական հաստատությունների փոխներթափանցման խնդիրը:

Ընտանիքն ու մանկապարտեզն ունեն իրենց առանձնահատուկ դերը, չեն կարող փոխարինել միմյանց: Հաջողության պայմանն է՝ վստահության գործարար կապերի հաստատումը, ճշտել ծնողների և մանկավարժների դաստիարակչական դիրքորոշումը, որը չափազանց կարևորվում է 5-6 տարեկաններին դպրոցին նախապատրաստելու համար: Ծրագիրը հատուկ շեշտադրում է ծնողների դերը մանկապարտեզի կյանքում: Նրանք պետք է ընդունել որպես դաստիարակների և դասվարների, դաշնակցի, ուսուցման և դաստիարակության գործը ճիշտ կազմակերպելու, երեխաներին անհրաժեշտ գիտելիքների, ինչպես նաև արժեքների փոխանցման գործում:

Ծրագիրը կարևոր է ոչ միայն գիտելիքներով հարուստ, մտավոր գործունեությամբ երեխայի զարգացումը, այլ նրա անձնային հիմնարար որակների

և սոցիալական հմտությունների ձևավորումը և ընդգծում է երեխայի սոցիալական հասունացման խնդիրը:

Որպես կանոն՝ երեխաների սոցիալական զարգացման վրա ներազդումը իրականացվում է ընտանիքում, որը հանդիսանում է գիտելիքների և արժեքների, վերաբերմունքի, դերերի և սովորույթների ուղեկիցը սերնդից-սերունդ: Սոցիալական զարգացումը երեխայի անձի զարգացման հուսալի երաշխիքն է, այն ուղղված է երեխայի անձնային հիմնարար որակների և սոցիալական հմտությունների ձևավորմանը: Սոցիալական փորձի ձեռքբերման գործընթացում ձևավորվում են անձնային այնպիսի հատկություններ, ինչպիսիք են՝ հասակակիցների և մեծերի հետ հաղորդակցվելու, ազատ ընտրություն կատարելու, որոշումներ կայացնելու, համագործակցային կարողություններ, ինչպես նաև հուզականորեն արձագանքելու, կարեկցելու, փոխօգնության և փոխզիջման ունակություններ և հմտություններ:

Սոցիալական զարգացման արդյունքում անձի ձեռքբերվող սոցիալական զարգացման առավել կարևոր գործոնը ընտանիքի մթնոլորտը, նրա դաստիարակության ոճն է: Այն ըստ էության՝ թե ինչպես է իրականացվում ծնողների շփումը երեխաների հետ, շատ բանով կախված է դաստիարակության ոճից, որն էլ իր հերթին բնորոշվում է այն արժեքներով, որոնք ընդունված են ընտանիքում և ծնողները ձգտում են հաղորդել երեխաներին:

Ծնողները պետք է ակտիվորեն մասնակցեն մանկապարտեզի կյանքին, ընդգրկվեն օգտագործվող ավանդույթային և ոչ ավանդույթային աշխատանքի ձևերում ու միջոցառումներում: Նրանց համար պետք է կազմակերպել դասախոսություններ, քննարկումներ, կլոր սեղաններ, խորհրդատվություններ, անկետային հարցաթերթիկների հիման վրա մշակել միջոցառումներ, բաց դռների օրեր, որոնք կօգնեն նրանց ծանոթանալու 5-6 տարեկանների դաստիարակության, ուսուցման ժամանակակից հիմունքներին, նրանց դպրոցի նախապատրաստման խնդիրներին, հոգեբանական առանձնահատկություններին, որոնք ի վերջո կնպաստեն ընտանիքում երեխայի դաստիարակությունը շարունակելու համար ձևերի և միջոցների ճիշտ ընտրությանը:

Մանկապարտեզի բազմակողմանի աշխատանքը պահանջում է ընտանիքի հետ կապ պահպանելու տարբեր ձևեր, զրույցներ, կոնսուլտացիաներ, ծնողական ժողովներ, այցելություններ, ծնողական կոմիտեի ձևավորում, ծնողների մասնակցություն մանկավարժական խորհրդի աշխատանքներին և այլն:

Ծնողների հետ կազմակերպվող անհատական զրույցները գնահատելի են նրանով, որ դաստիարակին հնարավորություն են տալիս միշտ շփման մեջ լինել ընտանիքի հետ և ավելի ազատ, բաց խոսել երեխայի մասին: Այդ զրույցները լինում են կարճատև, բայց կարող են ձեռք բերել շատ մեծ նշանակություն, քանի որ դաստիարակին և ընտանիքին իրազեկ են դարձնում երեխայի կյանքի բոլոր իրադարձություններին և հնարավորություն տալիս անմիջապես ազդել երեխայի վարքի վրա: Դրանց բովանդակությունը որոշվում է երեխայի վարքով: Հարկ չկա ծնողների հետ զրույցը սկսել գանգատներից: Ավելի նպատակահարմար է նախ նշել երեխայի բնավորության դրական կողմերը, լավ արարքները: Զրույցն ավարտելիս պետք է ծնողին առաջարկել ընդհանուր ուժերով ներգործել երեխայի վրա: Խորհրդատվությունները կարելի է անցկացել անհատական և փոքր խմբերով: Ծնողների հետ անհատական աշխատանք վարելու գործընթացում հաճախ է պատահում, որ նույն հարցերը, դժվարությունները ծագում են մի քանի ծնողների մոտ: Նման դեպքերում նպատակահարմար է մանկավարժական խորհրդատվություն անցկացնել միաժամանակ մի խումբ ծնողների հետ:

Ծնողների հետ մանկավարժական լուսավորմանը մեծապես նպաստում է շարժական թղթապանակների ստեղծումը, որն իր մեջ պարունակում է տեղեկատվություն, խորհուրդներ երեխայի կյանքն ու գործունեությունը ժամանակակից պահանջներին համապատասխան կազմակերպելու, ինչպես նաև մանկապարտեզի մանկավարժական գործընթացը լուսաբանող տարբեր նյութեր:

Ծրագիրը նախատեսում է նաև աշխատանքի և այլ ձևերի, միջոցների կիրառումը, որը կհուշի աշխատանքների կազմակերպման ընթացքը: Կրթական և դաստիարակչական աշխատանքների ընթացքում հետևողականորեն և ստեղծագործաբար իրականացելով ծրագրով նախատեսված խնդիրները, դաստիարակը, միաժամանակ ելնելով իրադարձությունից և կյանքի պայմաններից, պետք է կարողանա կողմնորոշվել և ազատորեն ընտրել ծնողների հետ կապի այս

կամ այն մեթոդը, իրեն նպատակահարմար և արդյունավետ աշխատանքի ձևեր և բովանդակություն:

Այսպիսով, մանկապարտեզի և տարրական դպրոցի ընդհանուր խնդիրն է 5-6 տարեկան երեխաների հետ աշխատանքներում մանկապարտեզի, ծնողի և դաստիարակի համագործակցությունը, նրանց ընդհանուր պարտականությունն է, որը կոչված է 5-6 տարեկան երեխաներին դպրոցական ուսուցմանը լավագույնս ապահովելուն:

Աշխատանք ծնողների հետ

1. Ծնողներին ծանոթացնել մանկապարտեզում իրականացվող մանկավարժական գործընթացի առանձնահատկություններին, նախադպրոցականի դաստիարակության և զարգացման ժամանակակից մոտեցումներին:
2. Սովորեցնել ճիշտ հաղորդակցվել երեխայի հետ, գնահատել նրա ձեռքբերումներն ու շտկել թերությունները:
3. Ապահովել յուրաքանչյուր ծնողի ակտիվ մասնակցությունը մանկապարտեզի մանկավարժական գործընթացին:
4. Աշխատանք տանել ծնողների մանկավարժական գիտելիքների բարելավման ուղղությամբ:

Գոյություն ունեն մանկապարտեզ-ընտանիք արդյունավետ համագործակցության երկու հիմնական ուղիներ՝

1. Հետևողական, հստակ, երկկողմանի հաղորդակցություն
2. Նախադպրոցական հաստատության աշխատանքներում ծնողների ներգրավման բազմազան միջոցները:

Ծնողներին ուշադիր լսելով՝ կարելի է արժեքավոր տեղեկություններ ստանալ, փոխօգնության բաց հարաբերություններ հաստատել:

Երկկողմանի և կանոնավոր հաղորդակցության միջոցով ծնողներն ու դաստիարակները սերտորեն համագործակցում են՝ ի շահ երեխաների բնական զարգացման:

Ժամանակակից մանկավարժությունը ընդգծում է ընտանիքի գերակայող դերը երեխայի դաստիարակության և անձնավորության ձևավորման գործում: Ընտանիքը

սոցիալական առաջին օղակն է, որտեղ յուրացվում են առաջին սոցիալական դերն ու հարաբերությունները:

Ընտանեկան դաստիարակության առավել արդյունավետ կազմակերպման նպատակով հարկավոր է կիրառել ընտանեկան դաստիարակության սկզբունքային տվյալ գործընթացը և շտկելու հնարավոր սխալներն ու թերությունները: Ընտանեկան դաստիարակության սկզբունքները գրեթե չեն տարբերվում դաստիարակության ընդհանուր սկզբունքներից: Դրանք են՝

- մոտեցում՝ մարդասիրական և գթասրտության դիրքերից,
- երեխայի հանեպ սիրո և հարգանքի դրսևորում,
- ընտանեկան փոխահարաբերություններում լավատեսության գերակայություն,
- երեխայի հետ բաց և վստահելի հարաբերությունների հաստատում,
- երեխային՝ դաստիարակության միասնական պահանջների ներկայացում,
- հետևողականություն և պահանջկոտություն,
- երեխային ընտանիքի գործունեության մեջ ակտիվ ներգրավվում:

Մանկապարտեզի և ընտանիքի փոխհարաբերության հիմքում ընկած է համագործակցությունը: Այն առավել արդյունավետ է, եթե հիմնավորած ու համակարգված է և օրգանապես միահյուսվում է դաստիարակի ընդհանուր մանկավարժական գործունեությանը:

Ծնողների հետ տարվող աշխատանքներում անհրաժեշտ է ապահովել հետևյալ պահանջները.

1. Երեխայի ընտանիքի կենսաձևի և սոցիալական մշակույթի ուսումնասիրում:
2. Երեխայի դաստիարակության մեջ մանկապարտեզի ընտանիքի միասնական պահանջների սահմանում և պահպանում:
3. Երեխաների ազատ ժամանակի արդյունավետ օգտագործում և այդ աշխատանքների մեջ ծնողների ներգրավում:
4. Ծնողների հետ վստահելի և գործնական հարաբերությունների հաստատում:
5. Երեխայի զարգացման ընթացքի մասին անհրաժեշտ տեղեկատվության փոխանակում:
6. Ծնողների մանկավարժական գիտելիքների հարստացում:
7. Պրակտիկ մանկավարժական օգնության ցուցաբերում:

8. Ծնողների՝ մանկապարտեզ այցելելու պարբերականության ապահովում:

9. Ծնողներին համապատասխան տեղեկատվության տրամադրում:

Ծնողների հետ համագործակցությունը վաղ մանկական և նախադպրոցական տարիքի երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում: Համագործակցության արդյունքում թե՛ ծնողը, թե՛ դաստիարակը արժեքավոր տեղեկություններ են ստանում երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, համակրանքների մասին: Այս տեղեկատվությունը պետք է այնպես փոխանակել, որ այն լավագույնս ծառայի երեխայի շահերին:

Մանկապարտեզի և ընտանիքի համագործակցության ձևերը

Մանկավարժի կողմից ծնողների հետ համատեղ աշխատանքն իրականացվում է տարաբնույթ ձևերով՝ միջոցառումներ և խաղեր, մանկավարժական զրույցներ ու թեմատիկ խորհրդատվություններ, այցելություններ, բաց դռների օրեր, կլոր սեղաններ, խաղային սցենարներ: Մանկապարտեզի և ընտանիքի կանոնավոր ու արդյունավետ համագործակցության ուղղություններն են.

Այցելություններ ընտանիք.

Տնային այցելությունները մասնագետներին՝ երեխաների ու նրանց ծնողների կյանքի պայմանների մասին անմիջական տվյալներ ստանալու լրացուցիչ հնարավորություն է ընձեռում: Տնային պայմաններն այցելուին թույլ են տալիս առավելագույնս իրագործել այն սկզբունքը, ըստ որի՝ կրթական արդյունավետ ծրագրերն սկիզբ են առնում այնտեղ, ուր գտնվում է հենց ինքը՝ սովորողը:

Կարելի է տնային այցելությունները այնպես կազմակերպել, որ ծնողի ներկայությունը քիչ կամ բոլորովին անհրաժեշտ չլինի: Սա հնարավոր է հատկապես այն դեպքում, երբ նպատակը տունը խմբասենյակին նմանեցնելն է, կամ ուսումնական կենտրոնների հենքով մշակված ծրագիրը տան պայմաններում իրականացնելը: Այստեղ նույնպես կիրառվելու է երեխայակենտրոն մոտեցում, որը չի պահանջում ծնողների ներկայությունը:

Տնային այցելությունները մի յուրահատուկ ուղի են հարթում դեպի ընտանիք և բացառիկ տեղեկատվություն ապահովում ընտանեկան իրավիճակի մասին: Միևնույն

ժամանակ պետք չէ ակնկալել, որ տնային այցելությունները կկարողանան լուծել խոշոր հիմնախնդիրներ:

Շաբաթական կամ ամսական լրատուներ.

Հաստատության տարածքում ձևավորվում են պաստառներ, որոնցում ձևավորվում են տվյալ խմբի ռեժիմը, պարապմունքների բաշխման գրաֆիկը, ծնողների համար խորհրդատվական նյութեր՝ բոլոր բաժինների ծրագրով: Ներկայացվում են հակիրճ տեղեկատվական խորհրդատվություններ՝ մանկավարժի, հոգեբանի և բժշկի կողմից: Հետաքրքիր է «կատակում են երեխաները» խորագիրը կրող պաստառը: Կիրառվում են հատուկ գրպանիկներ, որտեղ դաստիարակը տեղադրում է ֆոտոնյութեր: Դրանց միջոցով լուսաբանվում է երեխաների մասնակցությունը մանկապարտեզի միջոցառումներին:

Նման պաստառները օգտակար են ընտանիքներին միշտ թարմ տեղեկատվություն հաղորդելու առումով: Դրա միջոցով հնարավոր է ազդարարել ժողովների, հատուկ իրադարձությունների, ընտանիքների համար նախատեսված միջոցառումների, ընդհանուր առմամբ, ուսումնական հաստատության անցուդարձի օրերը:

Սեպտեմբերին բոլոր խմբերում անցկացվում են ծնողներին հարցումներ՝ ելնելով նրանց խնդիրներից և հետաքրքրություններից:

Նպատակահարմար է տարվա ընթացքում անցկացնել մրցույթ «Ամենահամերաշխ ընտանիքը»: Դրան մասնակցելու համար ընդհանուր ծնողական ժողովում ընտրվում են ամենաակտիվ ծնողներն ու նրանց երեխաները:

Ժողովների անցկացման ուղենիշներ.

Ճանաչելով ընտանիքներին՝ մենք ավելի հեշտությամբ հարմարվում ենք ծնողների միջև առկա անհատական տարբերություններին: Ծնողների վերաբերմունքը ըստ իրենց կրթության և փորձի՝ կարող է տատանվել զոհունակությունից մինչև թերահավատություն: Նախապես իմանալով ժողովների նկատմամբ ծնողների վերաբերմունքի այս կամ այն տարբերությունները՝ յուրաքանչյուր ծնողի կոնկրետ տեղեկություններ հաղորդել՝ ժողովին առնչվող մեր նպատակների մասին: Այդ կերպ նրանք մինչև մեր հանդիպումը մտածելու բան

կունենան: Պետք է ժամանակ հատկացնել ժողովի համապատասխան միջավայրի ստեղծմանը:

Ծնողների հետ քննարկել երեխային առնչվող սոցիալական, հուզական, կրթական, ճանաչողական և ֆիզիկական նպատակները: Բացատրել, թե ինչպե՞ս կարելի է հասնել դրանց: Նշել անհարժեշտ ռազմավարություններն ու պլանները:

Ժողովներ վարելիս հարկավոր է ձգտել.

- օգնել ծնողներին՝ իրենց հանգիստ, հարմարավետ և ցանկալի հյուր զգալ, քանի մանկապարտեզը մանկավարժի «տարածքն է»,
-հաղորդակցվել ծնողների հետ իրենց մակարդակին համապատասխան, խուսափել նեղ մասնագիտական բառապաշարի օգտագործումից,
-շեշտը դնել երեխայի բնավորության դրական հատկանիշների վրա,
- ծնողներին առաջարկել հատուկ մեթոդներ, որոնցով նրանք կարող են տանը օգնել իրենց երեխաներին:

Ծնողների գնալուց անմիջապես հետո.

- անհրաժեշտ է գրի առնել ժողովի մանրամասն արձանագրությունը՝ ներառելով առաջարկություններն ու քննարկված հարցերը.
- եթե մանկավարժից պատասխան է ակնկալվում, ապա հարկավոր է պատասխանել՝ առանց հապաղելու,
- անպայման պետք է ապահովել հետադարձ կապը:

Տնային այցելությունները մասնագետներին երեխաների ու նրանց ծնողների կյանքի պայմանների մասին անմիջական տվյալներ ստանալու լրացուցիչ հնարավորություն են ընձեռնում: Տնային պայմաններն այցելուին թույլ են տալիս առավելագույնս իրագործել այն սկզբունքը, ըստ որի՝ կրթական արդյունավետ ծրագրերն սկիզբ են առնում այնտեղ, ուր գտնվում է հենց ինքը՝ սովորողը:

Կարելի է տնային այցելությունները այնպես կազմակերպել, որ ծնողի ներկայությունը քիչ կամ բոլորովին անհրաժեշտ չլինի: Սա հնարավոր է հատկապես այն դեպքում, երբ նպատակը տունը խմբասենյակին նմանեցնելն է կամ ուսումնական կենտրոնների հենքով մշակված ծրագիրը տան պայմաններում իրականացնելը: Այստեղ նույնպես կիրառվելու է երեխայակենտրոն մոտեցում, որը չի պահանջում ծնողների ներկայությունը:

Տնային այցելությունները յուրահատուկ ուղի են հարթում դեպի ընտանիք և բացառիկ տեղեկատվություն ապահովում ընտանեկան իրավիճակի մասին: Միևնույն ժամանակ պետք չէ ակնկալել, որ տնային այցելությունները կկարողանան լուծել խոշոր հիմնախնդիրները:

Ոչ պաշտոնական գրառումներ

Մանկավարժական կազմը կարող է երեխայի միջոցով տուն ուղարկել կարճ գրառումներ: Դրանք կպարունակեն ընտանիքի անդամներին ուղղված տեղեկատվություններ՝ երեխայի կողմից որոշակի հմտությունների ձեռք բերման կամ իրականացված որևէ այլ գործունեության մասին: Կարելի է նաև այդ կերպ շնորհակալություն հայտնել ծնողներին ուսումնական հաստատությանն այս կամ այն ձևով աջակցելու համար: Ընտանիքի անդամները նույնպես կարող են մանկավարժներին ուղարկել երախտագիտության կամ որևէ խնդրանք պարունակող գրություններ:

Անհատական գրառումների գրքույկներ

Այս գրքույկները կարող են ամեն օր տնից հաստատություն և հակառակը փոխանցել ընթացիկ տեղեկատվությունը: Ընտանիքները կարող են մանկավարժներին նախազգուշացնել հատուկ իրադարձությունների, ինչպես, օրինակ, ծննդյան տոների, նոր աշխատանքի հնարավորության, ճանապարհորդությունների և այցելությունների մասին:

Առաջարկությունների տուփ

Ծնողներին առաջարկվում է իրենց մտքերը, մտահոգությունները, առաջարկություններն ու հարցերը մանկավարժական կոլեկտիվի անդամներին ներկայացնել հատուկ տուփի միջոցով:

Նրանք կարող են տուփի մեջ գցել գրավոր ձևակերպված իրենց հուզող հարցերը: Նախադպրոցական հիմնարկներում պետք է գործեն նաև «Վստահության հեռախոս», «Մանկավարժի հյուրասրահ», «Գաղափարների տոնավաճառ»:

Դրանք հաղորդակցության և համագործակցության ժամանակակից ձևեր են , որոնց միջոցով տարբեր մասնագետներ կապի մեջ են մտնում նախադպրոցականների ծնողների հետ և օժանդակում նրանց ամենատարբեր հարցերում:

Նպատակահարմար է տարվա ընթացքում անցկացնել մրցույթ՝ «Ամենահամերաշխ ընտանիքը»: Դրան մասնակցելու համար ընդհանուր ծնողական ժողովում ընտրվում են ամենաակտիվ ծնողներն ու իրենց երեխաները:

Գոյություն ունեն մանկապարտեզ-ընտանիք արդյունավետ համագործակցության երկու հիմնական ուղիներ՝

1. Հետևողական, հստակ, երկկողմանի հաղորդակցություն
2. Ծնողներին ներգրավման բազմազան միջոցներ:

Մանկապարտեզ-ընտանիք կապը հիմնվելու է փոխադարձ վստահության վրա: Արդյունավետ հաղորդակցությունը բազմապատկում է այն: Ծնողներին ուշադիր լսելով՝ կարելի է արժեքավոր տեղեկություններ ստանալ և փոխօգնության բաց հարաբերություններ հաստատել:

Երկկողմանի հաղորդակցության կանոնավոր հնարավորությունների միջոցով ծնողներն ու ուսուցիչները սերտորեն համագործակցում են՝ ի շահ երեխաների բնականոն զարգացմանը:

Կարևոր գաղափարներ ծնողների համար

Լինել ստեղծագործող նշանակում է առաջ քաշել նոր գաղափարներ, իսկ հին գաղափարներն ըստ անհրաժեշտության օգտագործել նոր և հնարավոր ձևերով: Երեխային պետք է թույլ տալ դրսևորել իր հնարամտությունը և քաջալերել նրա ստեղծագործական միտքը: Երբ երեխան հանգիստ է և վստահ, որ ուրիշներն իրեն չեն քննադատի, ապա ավելի մեծ է հավանականությունը, որ կդրսևորվի նրա ստեղծագործական միտքը:

Որոշ երեխաներ իրենց ստեղծագործական միտքը դրսևորում են՝ համադրելով բառերը, մյուսները համադրում են գույները կամ ձևերը, ոմանք էլ իրենց շարժումների միջոցով են արտահայտում:

Երեխաները սիրում են փոխել իրենց զգեստները և ձևացնել, իբր ուրիշ մարդ են: Երևակայական խաղը շատ բնորոշ է երեք տարեկան երեխաներին: Հագնվելով ուրիշի նման՝ երեխան պատկերացնում է իրեն ուրիշի տեղում, երևակայական այդ խաղի ընթացքում երեխաները կարող են պատկերացնել, որ իրենք որոշակիորեն ազդում են իրավիճակի վրա: Սա օգնում է նրանց ինքնավստահություն ձեռք բերել: Երեխաները այսպես կարող են հաղթահարել նաև իրենց վախն ու տագնապները

և կսկսեն հասկանալ դրանք: Թղթի վրա խզբզելով՝ երեխան առաջին քայլն է անում գրել սովորելու ճանապարհին: Նկարելով՝ նա սովորում է կառավարել իր ձեռքի մկանները և վարժեցնում աչք-ձեռք կոորդինացիան: Ճիշտ վարքագծի խրախուսումը հրաշքներ է գործում և էլ ավելի ոգևորում երեխային: Ծնողը պետք է իր նկատողությունները ձևակերպի այնպես, որպեսզի երեխան ոչ թե ժխտի կատարվածը, այլ խոստովանի:

Երեխան պետք է հասկանա, որ ծնողը հավատում է իրեն, իսկ ինքն էլ իր հերթին կարող է վստահել նրան:

Դրույթներ ծնողների հետ աշխատելու վերաբերյալ.

- Ծնողներին պարապմունքների և կազմակերպչական աշխատանքների մեջ ներգրավվելու համար պետք է օգտագործել բազմատեսակ ձևեր: Ստեղծագործական և ճկուն մոտեցում ցուցաբերել:
- Ժողովները և հանդիպումները կազմակերպել ծնողների համար հարմար ժամերի:
- Թույլ տալ, որ ընտանիքն ինքը որոշի ընդհանուր գործին իր մասնակցության լավագույն ձևը:
- Պահպանել սերտ կապ: Հետևել, որ մանկավարժական կոլեկտիվի անդամը յուրաքանչյուր երեխայի ծնողների հետ զրուցի առնվազն շաբաթը մեկ անգամ:
- Փորձել ներգրավել ամբողջ ընտանիքին:

Երբեմն հայրերը դուրս են մնում երեխաների համար իրականացվող ծրագրերից: Ստեղծագործաբար որոնել տարբերակներ՝ հայրերին, քույրերին, եղբայրներին և ընտանիքի մյուս անդամներին ներգրավելու համար:

- Հենվել երեխաների և ընտանիքի ուժեղ կողմերի վրա և արձագանքել դրականորեն:
- Պետք է լինել համբերատար:
- Պահպանել գաղտնիություն:

Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության մոդելի կենտրոնում երեխան է: Անտարակույս, նա է իր կրթության և զարգացման հաջողության գործի գլխավոր դերակատարը մանկապարտեզում և ընտանիքում: Սակայն համագործակցությունն ինքնին չի կարող հաջողակ երեխանել ունենալու

նախապայման դառնալ: Անհրաժեշտ է մշակել այնպիսի ձևեր, որոնց կնպաստեն ներգրավել, ուղղորդել, խթանել և շահագրգռել երեխաներին՝ ինքուրույն հասնելու հաջողության:

Կարևոր տեղ են հատկացվում ծնող-մանկավարժ ժողովների անցկացմանը: Դրանց նախապատրաստումը դաստիարակը պետք է դիտի որպես մի շարունակական գործընթաց, որի ժամանակ ծնողներին տեղեկատվության ձևով հաղորդում են մանկավարժական գիտելիքները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Որպես դաստիարակ և ծնող, շատ եմ կարևորում մանկապարտեզ-ընտանիքի համագործակցությունը: Երբ ծնողը մասնակից է լինում մանկապարտեզում կազմակերպված ծեսերին, միջոցառումներին, խաղերին, դա ավելի է մտերմացնում մանկապարտեզ- ընտանիք կապը: Ծնողներին ներգրավելը տալիս է իր դրական արդյունքները:

Դրանք են՝

- Ծնողների ոգևորվածությունը
- Համախմբվածությունը
- Մշտական շփումը մանկապարտեզի անձնակազմի հետ
- Ծնողների վստահության բարձրացումը մանկապարտեզի և դաստիարակության նկատմամբ:
- Երեխաների լավ վարքը:

Մանկապարտեզ-ընտանիք կապի ամրապնդման համար կարևոր է մեր համատեղ աշխատանքը, որը երկուստեք հաճելի է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հասմիկ Միտոյան, Լալա Սմբատյան «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար»:
2. Ավագ խմբի կրթական համալիր ծրագիր (5-6 տարեկանների)
3. Մանկապարտեզի կրտսեր 1-ին խմբի կրթական համալիր ծրագիր
4. Մանկապարտեզի 2-րդ խմբի կրթական համալիր ծրագիր
5. Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր
6. Ծնողական կրթություն, Երևան 2005